Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2007թ. փետրվարի 1-ի թիվ 1-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2007թ.մայիսի 12 կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը	Կատարողը
1	Դիտորդները հավատարմագրվում են. *ընտրություն նշանակելուց հետո բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ*	ԸՕ հոդվ. 29, կետ 2	մինչեւ 2007թ.մայիսի 2-ը	ԿԸՀ
2	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուներին (կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին) եթերաժամ տրամադրող հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները (անկախ սեփականության ձևից) վճարովի եթերաժամի յուրաքանչյուր որպեի գինը հրապարակում են. *ընտրություն նշանակելու օրվանից ոչ ուշ, քան 10 օր հետո*	ԸՕ հոդվ. 20, կետեր 4 և 5	մինչեւ 2007թ.փետրվարի 11 ը	Հեռուստառադիո ընկերություններ
3	Քվեարկության օրվա, քվեարկության տեղի և ժամանակի մասին ընտրողները ծանուցվում են. *ընտրություն նշանակելուց հետո, բայց ոչ ուշ քան քվեարկության օրվանից 3 օր առաջ*	ԸՕ հոդվ. 13, կետ 8	մինչեւ 2007թ.մայիսի 9-ը	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանում
4	ՀՀ Ազգային Ժողովի՝ համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման փաստաթղթերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. *քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 75 եւ ոչ ուշ, քան 70 օր առաջ՝ մինչեւ ժամը 18:00-ն*	ԸՕ հոդվ. 117, կետ 3	2007թ.փետրվարի 26 ից մինչեւ 2007թ.մարտի 3-ը՝ ժամը 18:00	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք
5	ՀՀ Ազգային Ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. *քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 75 եւ ոչ ուշ, քան 70 օր առաջ՝ մինչեւ ժամը 18:00-ն*	ԸՕ հոդվ. 117, կետ 6	2007թ.փետրվարի 26 ից մինչեւ 2007թ.մարտի 3-ը՝ ժամը 18:00	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք, նախաձեռնող խումբ
6	Նախընտրական հիմնադրամները ձևավորվում են. *առաջադրման փաստը հավաստող տեղեկանքը ստանալու օրվանից*	ԸՕ հոդվ. 25 կետ 1 և հոդվ. 112 կետ 1	առաջադրման փաստը հավաստող տեղեկանքը ստանալու օրվանից սկսած	Առաջադրված կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ, թեկնածուներ
7	Ձինվորական մասերում հաշվառված ընտրողների թիվը համապատասխան համայնքի և լիազոր մարմնի կամ նրա տարածքային ստորաբաժանման ղեկավարին ու ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. *քվեարկության օրվանից առնվազն 45 օր առաջ*	ԸՕ հոդվ.10 կետ 9 հոդվ. 15 կետ 3	մինչեւ 2007թ.մարտի 28-ը	Ձինվորական մասի ղեկավար
8	Ընտրական տեղամասերը կազմավորվում են. *քվեարկությունից ոչ ուշ, քան 45 օր առաջ*	ԸՕ հոդվ. 15, կետ 2	մինչեւ 2007թ.մարտի 28-ը	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան տարածքային ստորաբաժանում
9	Տեղամասային կենտրոնները կազմավորվում են. *քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ*	ԸՕ հոդվ. 17, կետ 1	մինչեւ 2007թ.մարտի 28-ը	Համայնքի ղեկավար

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը	Կատարողը
10	ՈՒժը կորցրել է ՀՀ ԿԸՀՈ N45-Ա, 14.03.2007թ.			
11	ՈՒժը կորցրել է ՀՀ ԿԸՀՈ N45-Ա, 14.03.2007թ.			
12	Կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատություններում տեղամասային կենտրոնները կազմավորվում են. *քվեարկության օրվանից առնվազն 45 օր առաջ*	ԸՕ հոդվ. 15 կետ 4 ԸՕ հոդվ.16 կետ 3	մինչեւ 2007թ.մարտի 28-ը	Կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատության ղեկավարներ
13	Ընտրական տեղամասերը հաստատվում, համարակալվում և տեղամասային կենտրոնները նշվում են. *քվեարկության օրվանից առնվազն 45 օր առաջ*	ԸՕ հոդվ.42 կետ 1 ենթակ. 3, 4	մինչեւ 2007թ.մարտի 28-ը	ԸԸՀ
14	Ընտրական տեղամասերի և տեղամասային կենտրոնների վերաբերյալ տվյալները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.	ԸՕ հոդվ.42 կետ 1 ենթակ. 4	Հաստատելուց հետո՝ երկօրյա ժամկետում	ԸԸՀ
15	Տեղամասային կենտրոնի կազմավորման մասին քաղաքացիները և տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավարը համայնքի ղեկավարի կողմից՝ հայտարարությունների միջոցով տեղեկացվում են. *տեղամասային կենտրոնի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում*	ԸՕ հոդվ. 17 կետ 3, ԿԸՀ 22.06.2005թ. թիվ 15-Ն որոշում	մինչեւ 2007թ.մարտի 30-ը	Համայնքի ղեկավար
16	ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում տեղադրելու համար՝ էլեկտրոնային տարբերակով, կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. *քվեարկության օրվանից առնվազն 41 օր առաջ*	ԸՕ հոդվ. 9 կետ 6	մինչեւ 2007թ.ապրիլի 1-ը	Լիազոր մարմին
17	ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքում տեղադրվում է. *քվեարկությունից առնվազն 40 օր առաջ*	ԸՕ հոդվ. 9 կետ 7	մինչեւ 2007թ.ապրիլի 2-ը	ԿԸՀ
18	Ընտրողների ցուցակները տեղամասային կենտրոնների տարածքները տնօրինող հաստատությունների ղեկավարներին տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում են. *քվեարկության օրվանից առնվազն 40 օր առաջ*	ԸՕ հոդվ.12 կետ 1 ԸՕ հոդվ.13 կետ 4	մինչեւ 2007թ.ապրիլի 2-ը	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար, ՏԿ տարածքը տնօրինող հաստ. ղեկավար
19	Ընտրողների ցուցակները՝ էլեկտրոնային կրիչով համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են. *քվեարկությունից 40 օր առաջ*	ԸՕ հոդվ.12 կետ 2[1]	մինչեւ 2007թ.ապրիլի 2-ը	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար
20	ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. *քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն*	ԸՕ հոդվ.117, կետ 4	մինչեւ 2007թ.մարտի 28-ը՝ ժամը 18:00	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք
21	ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. *քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն*	ԸՕ հոդվ.117, կետ 7	մինչեւ 2007թ.մարտի 28-ը՝ ժամը 18:00	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք, նախաձեռնող խումբ
22	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է. *քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 40 և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն*	ԸՕ հոդվ. 117, կետ 5	2007թ.ապրիլի 2-ից մինչեւ 2007թ.ապրիլի 7-ը՝ ժամը 18:00	ԿԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը	Կատարողը
23	ՀՀ Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների գրանցումը կատարվում է. *քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 40 և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն*	ԸՕ հոդվ. 117, կետ 8	2007թ.ապրիլի 2-ից մինչեւ 2007թ.ապրիլի 7-ը՝ ժամը 18:00	ԸԸՀ
24	Նախընտրական քարոզչությունն իրականացվում է. *սկսվում է թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը, ավարտվում՝ քվեարկությունից մեկ օր առաջ*	ԸՕ հոդվ, 18, կետ 5 և 113	2007թ.ապրիլի 8-ից մինչեւ 2007թ.մայիսի 10-ը՝ ժամը 24:00	ՀՀ քաղաքացիներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
25	Քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում հատուկ տեղեր առանձնացվում են. *ոչ ուշ, քան նախընտրական քարոզչությունն սկսվելուց 5 օր հետո*	ԸՕ հոդվ. 21 կետ 2	Մինչեւ 2007թ.ապրիլի 13-ը	Համայնքի ղեկավար
26	Հաշվառում չունեցող քաղաքացիներն ընտրողների ցուցակներում ընդգրկվելու վերաբերյալ հայտ կարող են ներկայացնել. *համայնքի ղեկավարին՝ քվեարկության օրվանից մինչև 21 օր առաջ* *լիազոր մարմին կամ նրա տարածքային ստորաբաժանում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ քան մինչև 15 օր առաջ*	ԸՕ հոդվ.10 կետ 3	մինչեւ 2007թ.ապրիլի 21-ը մինչեւ 2007թ.ապրիլի 27-ը	Համայնքի ղեկավար, լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար
27	Տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են. *քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 19 և ոչ ուշ, քան 16 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն*	ԸՕ հոդվ. 37 կետ 2	2007թ.ապրիլի 23-ից մինչեւ 2007թ.ապրիլի 26-ը՝ ժամը 18:00	ԸԸՀ
28	Տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերն անցկացվում են. *հանձնաժողովի կազմավորման հաջորդ օրը՝ ժամը 12:00-ին*	ԸՕ հոդվ.37 կետ 4	2007թ.ապրիլի 27-ին ժամը 12:00-ին	ԸԸՀ
29	Թեկնածուներն իրենց թեկնածությունը, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները՝ իրենց ընտրական ցուցակներն իրավունք ունեն հանել. *քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ*	ԸՕ հոդվ 111, կետ 4, 5	մինչեւ 2007թ.մայիսի 2-ը	Թեկնածուներ, որպես թեկնածու գրանցված կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
30	Զինվորական մասերում հաշվառված ընտրողների ցուցակները զորամասերում փակցվում են. *քվեարկությունից 10 օր առաջ*	ԸՕ հոդվ 13, կետ 7	մինչեւ 2007թ.մայիսի 2-ը	Զինվորական մասի ղեկավար
31	Քաղաքացիների, կուսակցությունների կողմից ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու, քաղաքացու կողմից ընտրողների ցուցակում ընդգրկվելու կամ ընտրողների ցուցակից դուրս գալու մասին դիմում ներկայացվում է. *համայնքի ղեկավարին՝ քվեարկության օրվանից մինչև 7 օր առաջ* *լիազոր մարմին կամ նրա տարածքային ստորաբաժանում՝ քվեարկության օրվանից մինչև 5 օր առաջ*	ԸՕ հոդվ.14 կետ 1	մինչեւ 2007թ.մայիսի 5-ը մինչեւ 2007թ.մայիսի 7-ը	Համայնքի ղեկավար, լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար
32	Քվեաթերթիկները թողարկվում են. *քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 9-ը և ոչ ուշ, քան 3 օր առաջ*	ԸՕ հոդվ. 49[1], կետ 8	2007թ.մայիսի 3-ից մինչեւ 2007թ.մայիսի 9-ը	ԿԸՀ
33	Ուժը կորցրել է ՀՀ ԿԸՀՈ N45-Ա, 14.03.2007թ.			
34	Թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակումն արգելվում է. *քվեարկության օրվան նախորդող 7 օրվա ընթացքում /ներառյալ քվեարկության օրը մինչև՝ ժամը 20.00-ն/*	ԸՕ հոդվ. 22 կետ 3	2007թ.մայիսի 5-ից մինչև 2007թ.մայիսի 12-ը՝ ժամը 20.00	ՁԼՄ-ներ, քաղաքացիներ, կազմակերպություններ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը	Կատարողը
35	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները, դրոշմակնիքները (ընտրատարածքում զինվորական մասի առկայության դեպքում) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին հանձնվում են. *քվեարկությունից ոչ շուտ, քան 5 և ոչ ուշ, քան 3 օր առաջ*	ԸՕ հոդվ.49[2] կետ 4	2007թ.մայիսի 7-ից մինչեւ 2007թ.մայիսի 9-ը	ԿԸՀ
36	Քվեարկության օրը ընտրական տեղամասեր գործուղման մեջ գտնվող ոստիկանության ծառայողների ցուցակը, ՀՀ ոստիկանությունը լիազոր մարմնի կամ նրա համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարին ներկայացվում է. *քվեարկության օրվանից առնվազն 3 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն*	ԸՕ հոդվ.10 կետ 3	մինչեւ 2007թ.մայիսի 9-ը՝ ժամը 14:00	ՀՀ ոստիկանություն
37	Ստացիոնար բուժման մեջ գտնվող՝ քվեարկությանը մասնակցել ցանկացող ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը՝ լիազոր մարմնի կամ նրա համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարին ներկայացվում է. *քվեարկության օրվանից առնվազն 3 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն*	ԸՕ հոդվ.46 3-րդ մաս	մինչեւ 2007թ.մայիսի 9-ը՝ ժամը 14:00	Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատության ղեկավար
38	Կալանքի տակ գտնվող ընտրողների ցուցակները կազմվում են. *քվեարկությունից 3 օր առաջ*	ԸՕ հոդվ.10 կետ 11	2007թ.մայիսի 9-ին	Կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատության ղեկավարը ԸԸՀ անդամի մասնակցությամբ
39	Զինվորական մասերում հաշվառված ընտրողների ցուցակները համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են. *քվեարկությունից 3 օր առաջ*	ԸՕ հոդվ.12 կետ 3	2007թ.մայիսի 9-ին	Զինվորական մասի ղեկավար
40	Ընտրողների վերջնական ցուցակները՝ էլեկտրոնային կրիչով, համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տրամադրվում են. *քվեարկության օրվանից 2 օր առաջ*	ԸՕ հոդվ.12 կետ 2[1]	2007թ.մայիսի 10-ին	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար
41	Ընտրողների վերջնական ցուցակները՝ըստ տեղամասերի և տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից (ընտրողների ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են. *քվեարկության օրվանից 2 օր առաջ*	ԸՕ հոդվ.12 կետ 2	2007թ.մայիսի 10-ին	Լիազոր մարմին կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավար
42	Ընտրողների ցուցակի վերջնական օրինակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. *քվեարկության օրվանից 2 օր առաջ*	ԸՕ հոդվ.13 կետ 6	2007թ.մայիսի 10-ին	ՏԸՀ նախագահ
43	Ընտրողների ցուցակը կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատություններում կազմավորվող տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին հանձնվում է. *քվեարկության օրվանից 2 օր առաջ*	ԸՕ հոդվ.12 կետ 4	2007թ.մայիսի 10-ին	Կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատության ղեկավար
44	Քվեարկության սենյակը կահավորվում է. *քվեարկությունն սկսվելուց առնվազն 24 ժամ առաջ*	ԸՕ հոդվ. 16, կետ 2 և հոդվ. 47 կետ 3	մինչեւ 2007թ.մայիսի 11-ը՝ ժամը 08:00	Համայնքի ղեկավար և ՏԸՀ
45	ՀՀ ընտրողների գրանցամատյանում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը հրապարակվում է. *քվեարկության նախորդ օրը*	ԸՕ հոդվ.7 կետ 4	2007թ.մայիսի 11-ին	Լիազոր մարմին
46	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները և կնիքների փաթեթները հանձնվում են. *քվեարկության նախորդ օրը*	ԸՕ հոդվ. 49[2] կետ 5 կետ 11	2007թ.մայիսի 11-ին	ԸԸՀ
47	Տեղամասային ընտրական հանձնաժողովին հանձնված բոլոր քվեաթերթիկները, ընտրողների ցուցակները ստորագրվում են. *քվեարկության նախորդ օրը մինչև ժամը 24:00-ն*	ԸՕ հոդվ.53 կետ 1	2007թ.մայիսի 11-ին՝ մինչեւ ժամը 24:00	ՏԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը	Կատարողը
48	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն սկսվում է. *քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին*	ԸՕ հոդվ.53 կետ 2	2007թ.մայիսի 12-ին՝ ժամը 07:00	ՏԸՀ
49	Քվեարկությունը *Քվեարկության օրը ժամը՝ 08:00-ից մինչեւ 20:00*	ԸՕ հոդվ.46	2007թ.մայիսի 12-ին, ժամը՝ 08:00-ից մինչեւ 20:00	ՏԸՀ
50	Տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը հրապարակվում է. *ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո*	ԸՕ հոդվ.61 կետ 6	2007թ.մայիսի 13-ին՝ մինչեւ ժամը 06:00	ՏԸՀ նախագահ
51	Փաթեթավորված և պարկի մեջ դրված ընտրական փաստաթղթերը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության երկու օրինակը, տեղամասում քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ արձանագրությունը, գործավարության մատյանը, կնիքը, դրոշմակնիքը (եթե հատկացվել է), քվեատուփը և քվեարկության խցիկները ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են. *քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում*	ԸՕ հոդվ.61 կետ 9 ԿԸՀ 22.06.05թ. թիվ 20-Ն որոշում	2007թ. մայիսի 13-ին՝ մինչեւ ժամը 08:00	ՏԸՀ նախագահ և քարտուղար
52	Ընտրություններին մասնակցած ընտրողների թվի մասին ամփոփ տվյալները պաշտոնապես հրապարակվում են. *քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 10.00-ն*	ԸՕ հոդվ.7 կետ 6	2007թ.մայիսի 13-ին՝ մինչեւ ժամը 10:00	ԿԸՀ
53	Տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ ավարտվում է. *քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում*	ԸՕ հոդվ.63 կետ 2	մինչեւ 2007թ.մայիսի 13-ը՝ ժամը 14:00	ԸԸՀ
54	ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների նախնական արդյունքներն ամփոփվում, արձանագրությամբ վավերացվում են. *քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում*	ԸՕ հոդվ.63[1] կետ 1	մինչեւ 2007թ.մայիսի 13-ը՝ ժամը 14:00	ԸԸՀ
55	Վերահաշվարկի պահանջի մասին դիմումներն ընդունվում են. *քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 14.00-ն*	ԸՕ հոդվ.40[2] կետ 7	մինչեւ 2007թ.մայիսի 13-ին՝ ժամը 14:00	ԸԸՀ
56	ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների նախնական արդյունքները արձանագրությամբ վավերացվում, հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակվում են. *քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո*	ԸՕ հոդվ.63[2] կետ 1	մինչեւ 2007թ.մայիսի 13-ը՝ ժամը 20:00	ԿԸՀ
57	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները, դրոշմակնիքները (եթե հատկացվել են)՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. *քվեարկության ավարտից 24 ժամ հետո*	ԸՕ հոդվ.63 կետ 3	2007թ.մայիսի 13-ին՝ մինչեւ ժամը 20:00	ԸԸՀ
58	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքները իրականացվում են. *քվեարկությունից երկու օր հետո՝ ժամը 9.00-ից մինչև քվեարկության օրվանից հինգ օր հետո՝ ժամը 14.00-ն*	ԸՕ հոդվ.40[2] կետ 7, 12	2007թ.մայիսի 14-ին, ժամը 09:00-ից մինչեւ 2007թ.մայիսի 17-ը՝ ժամը 14:00	ԸԸՀ
59	Ընտրատարածքում ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները ամփոփվում, արձանագրությամբ վավերացվում են. *քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր հետո*	ԸՕ հոդվ.63[1] կետ 2	մինչեւ 2007թ.մայիսի 17-ը	ԸԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը	Կատարողը
60	ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրության և ընդունած որոշման օրինակները կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 6 օր հետո***	ԸՕ հոդվ.63[1] կետ 8	մինչեւ 2007թ.մայիսի 18-ը	ԸԸՀ
61	ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր հետո***	ԸՕ հոդվ.63[2] կետ 3	մինչեւ 2007թ.մայիսի 19-ը	ԿԸՀ

Ծանոթություն՝ Ընտրական հանձնաժողովների աշխատաժամերն են՝ 09:00-ից մինչեւ 18:00, հանգստյան օրերը՝ շաբաթ և կիրակի, եթե ՀՀ ԸՕ-ով և սույն ժամանակացույցով այլ բան նախատեսված չէ: